2015, ՍԵՊՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 18 (446)

Քրիստոնյա Հայաստան

[redacted]

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

18 սեպտեմբերի

ՀՀ-ում Գերմանիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին:

Նորին Սրբությունը, ողջունելով նորանշանակ դեսպանին, գոհունակությամբ ընդգծեց Մայր Աթոռի եւ դեսպանատան միջեւ ձեւավորված ամուր կապերը, ինչպես նաեւ վստահություն հայտնեց, որ բարի ավանդները կշարունակվեն նաեւ վերջինիս պաշտոնավարության ընթացքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց նաեւ, որ հայ ժողովուրդը երախտագետ ոգով է հիշում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ԳԴՀ նախագահի արած հայտարարությունը, ինչը մեծ քայլ էր Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման տեսանկյունից եւ կարեւոր օրինակ՝ Հայոց ցեղասպանությունը չճանաչած մյուս պետությունների համար:

Զրույցի ընթացքում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, վերստին իր բարեմաղթանքները բերելով նորանշանակ դեսպանին եւ շնորհավորելով Գերմանիայի վերամիավորման առաջիկա տոնի առիթով, իր աղոթքն ու օրհնությունը փոխանցեց Գերմանիայի բարեսեր ժողովրդին:

Դեսպան Մաթիաս Քիսլերը ջերմ ընդունելության համար երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը՝ հավելելով, որ քաջատեղյակ է Հայ Եկեղեցու ստանձնած վիթխարի առաքելությանը թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում: Դեսպանը հավաստիացրեց, որ իր պաշտոնավարման շրջանում կանի ամենը, որ բարեկամ երկու երկրների ու ժողովուրդների միջեւ հարաբերություններն առավել զարգանան եւ համատեղ արդյունավորվեն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արտաքին առեւտրի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Մոսկվայի պետական համալսարանի ռեկտորին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Սադովնիչիին՝ ուղեկցությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, Հայաստանի ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը ողջունեց տիար Վ. Սադովնիչիի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ՝ գոհունակություն հայտնելով Մոսկվայի պետական համալսարանի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի առնչությամբ: Երեւանում նշանավոր համալսարանի մասնաճյուղի բացման առիթով Նորին Սրբությունը շնորհավորեց ՄՊՀ ռեկտորին՝ վստահություն հայտնելով, որ այն իր հերթին պիտի նպաստի երկու ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդմանը, ապա անդրադարձավ նաեւ հավատակից երկու ժողովուրդների դարավոր եղբայրական հարաբերություններին եւ ներկայում պետությունների միջեւ առկա դաշնակցային գործակցությանը՝ մաղթելով, որ ի պայծառություն երկու երկրների՝ այն առավել զորանա եւ պտղաբերի:

Տիար Վիկտոր Սադովնիչին իր հերթին խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ վերհիշելով տասնամյակներ առաջ իր այցը Մայր Աթոռ եւ հանդիպումը երջանկահիշատակ Վազգեն Առաջին Հայրապետի հետ: Անդրադառնալով համալսարանի մասնաճյուղի բացմանը՝ ՄՊՀ ռեկտորը մասնավորապես նշեց. «Համալսարանի, ինչպես եւ եկեղեցու հաստատումը, հավերժ է: Այս օրը կարձանագրվի մեր երկրների հարաբերությունների պատմության մեջ»:

Նորին Սրբությունը եւ Վ. Սադովնիչին խոսեցին նաեւ համալսարանական երիտասարդության կյանքում Եկեղեցու դերի եւ հոգեւոր կյանքի կարեւոր նշանակության, հասարակության առջեւ ծառացած մարտահրավերների մասին: Այս կապակցությամբ ՄՊՀ ռեկտորը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց համալսարանին կից գործող Ս. Տատյանայի եկեղեցու, ինչպես նաեւ համալսարանի ու Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ առկա սերտ համագործակցության մասին, կարեւորվեց հոգեւոր-բարոյական արժեքների ամրապնդման անհրաժեշտությունը, ընդգծվեց, որ ճշմարիտ աստվածսիրությամբ են պայմանավորված նաեւ հայրենասիրությունը եւ մարդկային կյանքի բարօրությունը: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ եւ եղբայրական հարաբերություններին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արտաքին առեւտրի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Իգոր Նազարուկին:

Նորին Սրբությունը, նշանակման առիթով իր հայրապետական օրհնությունը փոխանցելով պրն Նազարուկին, մաղթեց օրհնյալ եւ հաճելի ծառայություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ վերջինիս նախանձախնդիր գործունեության շնորհիվ հայ-բելառուսական հարաբերությունները կպսակվեն բարի արդյունքներով՝ ի բարօրություն եւ ի պայծառություն երկու բարեկամ ժողովուրդների:

Իր հերթին դեսպանը փաստեց, որ ինքը մեծ պատասխանատվությամբ է ստանձնել Հայաստանում Բելառուսի դեսպանի պարտականությունները: Տիար Իգոր Նազարուկը հավելեց նաեւ, որ քաջատեղյակ է հայ ժողովրդի հերոսական պատմությանն ու մշակութային հարուստ կյանքին եւ խորին հարգանք է տածում քրիստոնյա առաջին ժողովրդի նկատմամբ:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Բելառուսի հայ համայնքի կյանքին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արտաքին առեւտրի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը: *Շարունակությունը՝ էջ 2*

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը ՀՀ Անկախության տոնի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Անկախության տոնի բերկրաշատ առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի:

Պատմական ու նվիրական է այս օրը: 1991 թվականին մեր ժողովուրդը իրականացրեց անկախ ու ազատ ապրելու դարավոր իր երազանքը, եւ հաղթահարելով պատերազմի ու շրջափակման դժվարությունները՝ բարձր գիտակցությամբ ու աննահանջ պայքարով ամրացրեց հայրենի պետականության հիմքերը:

Անկախության տոնը հրավեր է վերարժեւորելու մեր անցած ուղին՝ նոր կորովով ու եռանդով, հայրենանվեր գործերով շենացնելու մեր երկիրը եւ այս տոնի պանծալի խորհրդով միշտ նորոգ պահելու մեր ուխտն առ հայրենին՝ ունկնդիր աստվածաշնչյան խոսքին, թե՝ ամենքս կոչված ենք ազատության եւ սիրով միմյանց ծառայելու (Գաղ. 5:13):

Մեր աղոթքն է, որ Աստված Իր ամենախնամ սուրբ Աջի հովանու ներքո միշտ անվրդով ու խաղաղ պահի մեր հայրենիքը եւ առատապես օրհնի, զորակից ու օգնական լինի հավատավոր մեր ժողովրդին՝ արգասավորելով հանուն մեր երկրի հզորացման բոլոր ջանքերը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Սկիզբը՝ էջ 1

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Քրիստոնեական եկեղեցիների պատվիրակություններին

28-30 սեպտեմբերի

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում հրաժեշտի հանդիպումներ ունեցավ ս. Մյուռոնի օրհնության արարողության առիթով Հայաստան ժամանած Քրիստոնեական Եկեղեցիների պատվիրակությունների հետ:

Նորին Սրբությունը Մյուռոնօրհնությանը հաջորդող օրերին ընդունեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Հյուսիսային Սինայի Կոզման եպիսկոպոսի, Հնդիկ Մալաբար Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Մումբայի միտրոպոլիտ Գեւարգիես Մար Կուրիլոսի, Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Մորավիայի Անտոնի եպիսկոպոսի գլխավորած պատվիրակությանը, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու Տրանսիլվանիայի միտրոպոլիտ Լավրենտիոս Ստրեզային, Նոր Ջուստինիանայի եւ Համայն Կիպրոսի Քրիզոստոմոս Բ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Նեապոլի Պորփյուրիոս եպիսկոպոսին, Չեխիայի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Միխալցովեյի եւ Կոշիցեի Յուրայ արքեպիսկոպոսին, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Փոթիի եւ Խոբսկի միտրոպոլիտ Գրիգորիին, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Աստի եպիսկոպոսին, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Նյուքասլի Մարտին Վարթոն եպիսկոպոսին եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչ Դանիել քահանա Բուդային:

Հանդիպումների ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը Մյուռոնօրհնությանը բերած մասնակցության եւ աղոթակցության համար իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչներին:

Նորին Սրբությունը պատվիրակների միջոցով իր եղբայրական ողջույնները փոխանցեց նաեւ Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ նրանց սրբազան առաքելության արդյունավորման համար հայցելով Ամենակալ Աստծու հովանին եւ զորակցությունը:

1 հոկտեմբերի

Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պատրին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաժեշտի հանդիպում ունեցավ Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Նորին Ամենապատվություն Թեոդորոս Բ-ի հետ:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց, որ քույր Եկեղեցիների հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները, ընդառաջ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրավերին, սրբալույս Մյուռոնի օրհնության առիթով ժամանել են Հայաստան՝ աղոթակից լինելու Հայ Եկեղեցուն եւ կիսելու հայ ժողովրդի ուրախությունը:

Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով նաեւ Հայոց ցեղասպանության 100-ամյակի տարում Քրիստոնեական Եկեղեցիների մասնակցությանը ապրիլյան միջոցառումներին, ընդգծեց, որ այդ ներկայությունը կարեւոր ուղերձ էր համայն աշխարհին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու, ինչպես նաեւ մարդկության կյանքում նմանօրինակ ոճիրները կանխելու առումով: «Կարեւորում ենք այս տեսակի զորակցությունը, որով զորանում են նաեւ փոխադարձ կապերը Եկեղեցիների միջեւ»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Ամենակալ Աստված հանապազ օրհնի եւ խաղաղ ու անվրդով պահի Իր Սբ. Եկեղեցին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս Մնացականյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2015-2016 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսությունը

[redacted]եպտեմբերի 15-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի 2015-2016 թթ. ուսումնական տարվա բացումը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների տեսչական ու դասախոսական անձնակազմը, սաները եւ այլ հրավիրյալներ:

Տերեւկույթը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, ապա կատարվեց ուսանողների օրհնության կարգ:

ՀՀ եւ ճեմարանի օրհներգերից հետո 2015-2016 թթ. ուսումնական տարվա կապակցությամբ խոսք ասաց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

«Մեր տրամադրությունը տոնական է այսօր ոչ թե զուտ այն պատճառով, որ նոր ուսումնական տարվա բացմանն ենք մասնակցում, այլ որ ներքուստ յուրաքանչյուրս ապրում է խոր բավարարության մի զգացում, որ ծնվում է ճեմարանի հաղթական ընթացքից: Բոլորս քաջ գիտակցում ենք այն առաքելությունը, որ Գեւորգյան կրթարանը բարեհաջող կերպով իրականացնում է Հայոց Եկեղեցում, ավելին՝ դրա ականատեսն ու մասնակիցն ենք: Այն Հայոց Եկեղեցու վերածննդի հիմնական երաշխիքն է, նրա անխափան եւ հավատարիմ գործունեությունից է կախված մեր ազգի հոգեւոր-բարոյական առաջադիմությունը: Մենք ոչ միայն գիտակցում ենք սա, այլեւ հավատով նվիրվում այս գաղափարի իրականացմանը հայ կյանքում: Իմ խորին համոզմամբ՝ ճեմարանականի ինքնության ամենաբնորոշ հատկանիշներից մեկն անպարտության ոգին է: Դրանով է ճեմարանական կրթությունը տարբերվում մյուս բոլորից. նրա տարերքը պայքարն է, ձգտումը, լույսը...»,- նշեց Գեւորգ սրբազանը:

Ապա վերատեսուչ սրբազանը հանդիսության մասնակիցներին ներկայացրեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նորանշանակ տեսուչ Գարեգին աբեղա Համբարձումյանին՝ բարի ընթացք մաղթելով վերջինիս ստանձնած պատասխանատու առաքելությանը:

Գեւորգ սրբազանն անդրադարձավ նաեւ ընդունելության քննությունների արդյունքներին՝ տեղեկացնելով, որ այս տարվա 77 դիմորդներից Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններ ընդունվել է 43 սան, որոնցից 14-ը՝ Գեւորգյան ճեմարան, 29-ը՝ Վազգենյան դպրանոց, իսկ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարան է ընդունվել 15 սան, 11-ը՝ 10-րդ դասարան, 2-ը՝ 11-րդ դասարան, 2-ը՝ 12-րդ դասարան: Սրբազանը հավելեց նաեւ, որ առաջիկայում ընդունելության քննություններ կանցկացվեն Քահանայից պատրաստման լսարանի դիմորդների համար:

Հավարտ սրբազան հոր խոսքի, ղեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանի, հայրենասիրական երգերով հանդես եկավ Գեւորգյան ճեմարանի երգչախումբը, իսկ առանձին սաներ նաեւ ասմունքեցին:

Տերեւկույթի ընթացքում խոսքով հանդես եկավ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի տնօրեն Աննա Մնացականյանը: Վերջինս, ուրախությամբ փաստելով ճեմարանի եւ քոլեջի միջեւ ձեւավորվող գործակցությունը, ճեմարանին ընծայաբերեց քոլեջի սաների հեղինակած երկու կտավ:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի վերատեսուչին ու նորանշանակ տեսուչին եւ մաղթեց, որ նրանց ջանքերով, նվիրումով ու նախանձախնդրությամբ հոգեւոր հաստատությունն առավել զորանա ու պտղաբերի:

Նոր ուսումնական տարվա առիթով Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքն ու շնորհավորանքները փոխանցեց Մայր Աթոռի միաբանությանը, ճեմարանի պաշտոնեությանը, դասախոսական կազմին եւ սաներին՝ ընդգծելով, որ ինքը լավատեսությամբ է նայում հոգեւոր հաստատության ուսումնական ընթացքին:

«Գեւորգյան հոգեւոր ճեմարանը մեր Առաքելական Սբ. Եկեղեցու՝ Քրիստոսի խորհրդական մարմնի արյունատար մայր երակն է:

Շարունակությունը՝ էջ 3

Վարդապետական թեզերի պաշտպանություն

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սեպտեմբերի 25-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզեր պաշտպանեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հետեւյալ միաբանները. քրեակատարողական հիմարկների հոգեւոր տեսուչ Ռուբեն աբեղա Զարգարյանը («Հիսուս Մարկոսի Ավետարանում»), Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս աբեղա Դավթյանը («Հայկական եւ ռուսական եկեղեցական տոների ժողովրդական արարողությունների համեմատական քննությունը»), Մայր Աթոռի փոխդիվանապետ Պարթեւ աբեղա Բարսեղյանը («Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի մանկավարժական հայացքները»), Մայր Աթոռի կադրերի բաժնի տնօրեն Կյուրեղ աբեղա Դավթյանը («Դավանաբանական վեճերը երրորդ դարի կեսերին եւ դրանց արձագանքը հայ դավանաբանական գրականության մեջ»), Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն աբեղա Առաքելյանը («Բյուզանդական Եկեղեցու հարցում-մեղադրանքները եւ Հայոց Եկեղեցու հայրերի պատասխանները՝ ըստ հայկական աղբյուրների («Խաչի պաշտամունքի, Ս. Սարգսի տոնի եւ մատաղի օրինակով)»), Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին աբեղա Համբարձումյանը («Սիրաքի Իմաստության հայերեն թարգմանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի՝ մասնավոր վարդապետության իշխանություն տրվեց սեպտեմբերի 25-ին վարդապետական թեզեր պաշտպանած յոթ միաբաններին:

Արարողության ավարտին Եզրաս արք. Ներսիսյանը շնորհավորեց նորընծա վարդապետներին՝ մասնավորապես նշելով. *«Դուք այսօր կոչված եք Տիրոջ կենարար խոսքը քարոզելու, մեր սրբազան հայրերի ճշմարիտ վարդապետությունը մեկնելու, որպեսզի աստվածային խոսքի իմաստությամբ եւ ճշմարտությամբ առաջնորդվեն Սուրբ Եկեղեցու՝ ձեզ վստահված մեր զավակները, որպեսզի ձեր խորհրդով ու ձեր իմաստուն առաջնորդությամբ մերժեն ամեն տեսակի գայթակղություն եւ մեղք, պահեն իրենց հոգու անդորրը»*: Սրբազան հայրը մաղթեց, որ Աստծու օրհնությունն ու Սուրբ Հոգու շնորհները մշտապես ուղեկցեն նրանց, հաստատուն մնան իրենց կոչման մեջ եւ վարդապետական գավազանով դեպի Տիրոջ կենարար խոսքն առաջնորդեն իրենց հավատացյալ հոտը:

Նույն օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց յոթ վարդապետներին՝ ուղեկցությամբ լուսարարապետ Հովսեփ եպս Հակոբյանի եւ վարդապետական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային գրասենյակի տնօրեն եւ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանի:

Հանդիպմանը Բագրատ սրբազանը յոթ վարդապետների անունց հավատարմություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Այնուհետեւ վարդապետական աստիճանի արժանացած հայր սուրբերին շնորհավորեց եւ իր պատգամն ու գնահատանքը բերեց Վեհափառ Հայրապետը՝ վստահություն հայտնելով, որ նրանք ամենայն պատասխանատվությամբ կիրականացնեն իրենց ծառայությունը Հայ Եկեղեցու անդաստանում: Նորին Սրբությունը հորդորեց, որ իրենց ծառայությունն արդյունավորեն նաեւ գիտակրթական ասպարեզում:

Վերջում Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց վարդապետներին եւ հաջողություն մաղթեց նրանց առաքելությանը:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2015-2016 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսությունը

Սկիզբը՝ էջ 2

Այս հաստատության արդյունավոր գործունեությամբ է, որ մեր ժողովրդի կյանքում ապրում եւ իր առաքելությունն է իրականացնում մեր Մայր Եկեղեցին: Մենք որքան կարողանանք արդյունավետ կերպով իրագործել մեր պարտականությունները Գեւորգյան հոգեւոր կրթական հաստատությունից ներս. այն է՝ պատրաստել արժանավոր եկեղեցականներ եւ նվիրյալ հայորդիներ, մեր երկրի քաղաքացիներ, այնքան մեր Եկեղեցին իր փառքի մեջ կպայծառակերպվի, այնքան նաեւ մեր ժողովրդի հոգեւոր-բարոյական կյանքն իր բարձրության վրա կլինի: Ահա՛ թե ինչու բոլորս՝ միաբանություն, մանկավարժներ, ուսանողներ, պիտի մեր ջանքերն առավելագույնս ներդնենք, որպեսզի այս հաստատությունն արդարացնի բոլորիս հույսերն ու սպասումները»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Անդրադառնալով մերօրյա հոգեւորականի կերպարին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ ժողովուրդն իր հոգեւոր խնամատարության համար ակնկալում է բարոյական բարձր նկարագրով, գիտելիքների հարուստ պաշարով եւ զորեղ հավատքով եկեղեցականների, եւ այդ իմաստով ամենայն ջանք ի գործ պետք է դրվի, որպեսզի ճեմարանից դուրս եկող սանը չնմանվի ավետարանական անպտուղ թզենուն, այլ արժանի դառնա մեր սուրբ հայրերի ժառանգությանը եւ նրանց առաքելության հպարտ շարունակողը հանդիսանա: *«Կարեւոր է, որ այս կրթական հաստատությունը գիտելիքներով զինի սաներին, բայց առավել կարեւոր է այն, որ այս հաստատության մեջ կրթվի ու դաստիարակվի խոր հավատքի տեր, իր առաքելության տեսլիքն ունեցող, հոգեւոր նկարագրով եւ ամուր կերտվածքով օժտված հոգեւոր առաջնորդը եւ հոգեւոր հովիվը: ...Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հոգեւորականներ կրթող, պատրաստող հաստատություն է, իսկ հոգեւորականի առաջին բարենիշը նրա հոգեւոր նկարագիրն է, հոգեւոր զորեղ ապրումը եւ հավատքը, որոնցից պետք է ծնվեն ե՛ւ եկեղեցաշեն, ե՛ւ ազգաշեն գործերը»*,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձ կատարեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդին՝ նշելով, որ այն յուրաքանչյուրի մեջ վերարթնացնում է ապրումներ եւ հիշատակներ, որոնք ոգի եւ նախանձախնդրություն են կերտում:

Ուստի Հայոց Հայրապետը եկեղեցականներին հորդորեց իրենց ծառայությամբ նպաստել ժողովրդի հոգեւոր-բարոյական կյանքի, հայրենանվիրումի զգացումի եւ գիտակցության զորացմանը, որպեսզի 1915 թվականը երբեք չկրկնվի հայ ժողովրդի կյանքում, եւ հայոց ազգն առաջնորդվի հաղթանակներից դեպի նորանոր հաղթանակներ, ձեռքբերումներից դեպի նոր ձեռքբերումներ՝ ի շինություն եւ ի պայծառություն ազգային կյանքի, հայրենիքի եւ Առաքելական Սբ Եկեղեցու:

Բացման հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերգով:

«Լավագույն ուսուցիչ» մրցույթը՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սեպտեմբերի 18-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանում անցկացվեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ու Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համագործակցությամբ իրականացվող «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը:

Հայոց պատմություն, Հայոց Եկեղեցու պատմություն, հայոց լեզու եւ գրականություն, բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչների եւ դասվարների մրցույթի հանրապետական փուլին Երեւանից եւ ՀՀ բոլոր մարզերից մասնակցեց 134 ուսուցիչ:

Մրցույթի նպատակն է նպաստել հայոց ազգային դպրոցում սերունդներին կրթելու, դաստիարակելու գործում մանկավարժի դերի բարձրացմանը՝ բացահայտելով առարկայական խոր պատրաստվածություն ցուցաբերած, տաղանդաշատ, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին ու տարածել նրանց մանկավարժական եւ մասնագիտական փորձը, ինչպես նաեւ հասարակության մեջ խթանել ուսուցիչ-մանկավարժի հեղինակության բարձրացմանը:

Մրցույթի ավարտին ուսուցիչները հնարավորություն ունեցան նաեւ ՔԴԿ աշխատակիցների առաջնորդությամբ այցելել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարաններ:

Առաջիկայում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում կկայանա «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հանդիսավոր մրցանակաբաշխությունը:

Նոր եպիսկոպոսներ

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան **Գարեգին աբեղա Համբարձումյանը**, ազատվելով Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի փոխտնօրենի պաշտոնից, նշանակվել է Մայր Աթոռի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ:*

*Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան **Կիրակոս աբեղա Դավթյանը**, ազատվելով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ:*

*Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան **Զաքարիա վրդ. Բաղումյանը**, ազատվելով Ծիսական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատուի պարտականություններից, նշանակվել է Եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն:*

Գարեգին աբեղա Համբարձումյանը (ավագանի անունը՝ Արթուր) ծնվել է 1986 թ. Կապան քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Մոսկվայի թիվ 249, ապա Երեւանի թիվ 148 դպրոցներում: Դպրոցական տարիներին հաճախել է նաեւ Արաբկիրի հայորդյաց տուն: 2002-2008 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 2006 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ: 2008 թ. ծառայության է անցել Մայր Աթոռի դիվանատանը՝ նախ որպես Եկեղեցի-պետություն բաժնի գործավար-քարտուղար, ապա՝ նույն բաժնի պատասխանատու: 2008 թ. Գեւորգյան հոգեւոր ճեմարանում գերազանցությամբ պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու կանոնահիրավական փոխհարաբերությունները» թեմայով: 2009 թ. հուլիսի 19-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Գարեգին աբեղա: 2010-2014 թթ. սովորել է Մեծ Բրիտանիայի Շեֆֆիլդի համալսարանում՝ միաժամանակ ուսանելով եւ պարբերաբար դասախոսելով Օքսֆորդի համալսարանում: Ուսումնառության ավարտին ստացել է աստվածաբանության դոկտորի (PhD) աստիճան: Ուսման տարիներին, որպես այցելու հոգեւոր հովիվ, իր ծառայությունն է բերել Լոնդոնի Ս. Եղիշե եւ Մանչեսթրի Ս. Երրորդություն հայկական եկեղեցիներում, ինչպես նաեւ հիմնել է Օքսֆորդի համալսարանական առաքելության ծուխը: 2014 թ. նոյեմբերից, որպես փոխտնօրեն, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնում:

Կիրակոս աբեղա Դավթյանը (ավագանի անունը՝ Գեւորգ) ծնվել է 1982 թ. մայիսի 20-ին Թբիլիսիում: 1989-1999 թթ. սովորել



է տեղի թիվ 104 միջնակարգ դպրոցում: 1999-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 2005 թ. նոյեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-վրացական եկեղեցական բաժանման վավերագրերը» թեմայով: 2005-2006 թթ. աշխատել է Մայր Աթոռի «Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնում: 2005 թ. փետրվարի 5-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Կիրակոս աբեղա: 2005-2008 թթ. ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում՝ որպես Բաթումիի Ս. Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ: 2008-2012 թթ. սպասավորել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում՝ որպես Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ: 2013-2015 թթ., որպես փոխառաջնորդ, ծառայել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում:

Զաքարիա վրդ. Բաղումյանը (ավագանի անունը՝ Տիգրան) ծնվել է 1978 թ. մարտի 25-ին Երեւանում: 1985-1995 թթ. սովորել է Երեւանի թիվ 163, 177 միջնակարգ դպրոցներում, 1995-2000 թթ.՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա՝ Գեւորգյան ճեմարանի Զ լսարանում: 2000 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ: 2000-2001 թթ. Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետեւել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին: 2001 թ. հուլիսին աշխատանքի է անցել Մայր Աթոռի տեղեկատվական համակարգում: 2002 թ. փետրվար-հունիս ամիսներին ուսանել է

Դանիայի Օրհուս քաղաքի Diaconal Folk High School-ում՝ ուսումնասիրելով սոցիալական աստվածաբանություն: 2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պետրոս արք. Բերդումյանի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատությունը» թեմայով: 2003 թ. հուլիսի 14-22-ը Ալբանիայում մասնակցել է «Սինդեսմոսի» հոբելյանական XVII գագաթնաժողովին, իսկ սեպտեմբերի 3-15-ը Երուսաղեմում՝ երիտասարդ աստվածաբանների էկումենիկ ֆորումին: 2005-2007 թթ. նշանակվել է Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն եւ սպասավոր սարկավագ՝ հնդկահայոց եկեղեցիներում: 2007 թ. Կալկաթայում հրատարակել է «Արեւմտյան Բենգալիայում թաղված հայ հոգեւորականները» աշխատությունը: 2007-2008 թթ. աշխատել է Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, 2008 թ. մայիսից կրկին աշխատանքի է անցել Մայր Աթոռի տեղեկատվական համակարգում: 2008 թ. մայիս ամսին հաջողությամբ հանձնել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ավարտական պետական քննությունները եւ ստացել որակավորման նոր վկայական՝ աստվածաբանության մագիստրոսի աստիճանով: 2008 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հրատարակել է Պետրոս արք. Բերդումյանի «Աղբիւր բացեալ» (ավետարանական առակների մեկնություն) աշխատության աշխարհաբար առաջին թարգմանությունը՝ ծավալուն առաջաբանով եւ ծանոթագրություններով: 2009 թ. նոյեմբերին նշանակվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հոգեւոր սպասավոր: 2010 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հրատարակել է Պետրոս արք. Բերդումյանի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության համեմատական բնագիրը՝ ուսումնասիրությամբ հանդերձ: 2011 թ. դեկտեմբերի 4-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Զաքարիա աբեղա: 2011 թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով պարգեւատրվել է «ՀՀ Զինված Ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով: 2012 թ. հունվարի 20-ին նշանակվել է Միջեկեղեցական բաժնում՝ որպես ծիսական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու: 2012 թ. տեր Վահրամ քհն. Մելիքյանի հետ առաջին անգամ անգլերենից հայերեն է թարգմանել Գարեգին Ա Կաթողիկոսի «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ Եկեղեցին» կարեւոր աշխատությունը, որը լույս է տեսել արտերկրում՝ Գարեգին Ա Հայրապետին նվիրված մատենաշարով: 2013 թ. մարտի 11-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» թեմայով եւ ապրիլի 6-ին ստացել մասնավոր վարդապետության աստիճան: Վարդապետական թեզը գրքի տեսքով լույս է տեսել նույն տարում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: 2014 թ. Մայր Աթոռում հրատարակել է «100 հարց Ս. Հաղորդության մասին» աշխատությունը: Հեղինակ է նաեւ մի շարք աստվածաբանական, հայագիտական եւ հրապարակախոսական հոդվածների:

Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի պատվիրակության այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածին եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարան այցելեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի պատվիրակությունը՝ գլխավորությամբ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ռեկտոր, Վերեյսկիի արք. Եվգենիի:

Ճեմարանում հյուրերին ընդունեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին աբեղա Համբարձումյանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց վերջին շրջանում երկու հոգեւոր հաստատությունների միջեւ ձեւավորված համագործակցության եւ դրա ընդլայնման հնարավորությունների մասին: Մասնավորաբար անդրադարձ կատարվեց ուսանողների փոխանակման ծրագրին, դասախոսների վերապատրաստման եւ փոխադարձ այցելությունների կազմակերպման խնդրին:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարաններ, ծանոթացան Հայոց Եկեղեցու սրբություններին ու հոգեւոր-մշակութային ժառանգությանը:

Բաց դաս՝ նվիրված սրբալույս Մյուռոնի խորհրդին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու Կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը նախաձեռնել է Մյուռոնօրհնեքին նվիրված ծրագիր, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում, Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի շրջանակներում, անցկացնել բաց դաս՝ նվիրված սրբալույս Մյուռոնի խորհրդին:

Ծրագրի շրջանակներում հրատարակվել է «Շնորհաբաշխ սուրբ Մյուռոն» գրքույկը եւ բազմացվել «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած «Սրբալույս Մյուռոն» ֆիլմը, որոնք, որպես օժանդակ նյութ, տրամադրվելու են դպրոցներին:

Ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 27-ին՝ Մյուռոնօրհնեքի արարողությանը, ՀՀ մարզերից եւ Երեւանից ուխտավորաբար ներկա գտնվեցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ստացան շուրջ 700 ուսուցիչ եւ աշակերտ:

Հրատարակվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2015 թ.)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արխիվի եւ թանգարանների տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանի նախաձեռնությամբ լույս է ընծայվել «Մյուռոնօրհնությունը ԺԹ-ԻԱ դարերում» փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուն:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արխիվի եւ Հայաստանի ազգային արխիվի համատեղ ջանքերով հրատարակված վավերագրերը լուսաբանում են 19-21-րդ դարերում Մյուռոնօրհնության եւ Մյուռոնի առաքման գրեթե բոլոր առանցքային հարցերը: Ժողովածուի մեջ ընգրկվել են նաեւ 2001-2008 թթ. Մյուռոնօրհնությունների վերաբերյալ նյութեր, ինչպես եւ՝ պատմական լուսանկարներ ու չհրատարակված նյութերի ցանկեր: Ժողովածուն կազմել եւ ծանոթագրել է Հայաստանի ազգային արխիվի աշխատակից պատմական գիտ. թեկնածու Գոհար Ավագյանը:

Գիրքը տպագրվել է ամերիկաբնակ տեր եւ տիկին՝ Տիրան եւ Քնար Եղբայրյանների մեկենասությամբ:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՀԱՆԳԸ

«Անհանգ ոտանավորի ոտքը կաղ է...»:

Վ. Շեքսպիր. «Համլետ»

Այսօր հանգի մասին խոսելիս արդիական տրամադրություններով համակված բանաստեղծները քմծիծաղ են տալիս, ավելի պահպանողականները կառչում են հանգին եւ փորձում ինչ գնով էլ լինի պաշտպանել հարձակումներից: Հանգը դարձել է ժամանակակից պոեզիայի այն կարեւոր բաղադրիչներից մեկը, ինչի շուրջ դեռեւս Դանիել Վարուժանի ժամանակներից մի ներքին բանավեճ է սկսվել, եւ նույնիսկ ոմանք (ավելի սահմանափակները) հավակնում են դրանով որոշել ստեղծվող պոեզիայի արդիական կամ ոչ արդիական լինելու հանգամանքը:

Ինչ է կատարվում իրականում. անհրաժեշտությո՞ւն է հանգը, թե՞ ոչ, վերանո՞ւմ է այն, թե՞ շարունակում նույն չափով ու առատությամբ կիրառվել, ինչպես անցյալ ժամանակներում: Փորձենք պատասխանը տալ ոչ թե կտրուկ բնորոշումներով, այլ հարցի քննությունն սկսել ավելի խորքից եւ այն մեկմաբանել հայ բանաստեղծների երկերով ու տեսական դատողություններով:

Հանգն ինքնին գործող կշռույթային միավոր չէ, գտնվում է չափական ու հնչյունական համակազմի մեջ եւ սերտորեն պայմանավորված է այն լրացնող մնացած տարրերի գոյության ու դրսեւորման յուրահատկություններով: Կշռույթային տարրերը բոլոր դեպքերում գտնվում են համակցական կապի մեջ. Մեկի առկայությունը պայմանավորում է մյուսի գոյությունը, մեկի բացակայությունը դուրս է մղում նաեւ մյուսին:

Հանգը բանաստեղծության կշռույթը կարգավորող գլխավոր գործոններից մեկն է: Հանգը բանաստեղծության տողերը հնչյունական նմանությամբ կապակցում է իրար, ստեղծում ներփակ, ավարտուն տներ: Հանգը պարբերաբար ազդարարում է տողերի չափական շարքի վերջն ու ավարտը, եւ իզուր չէ, որ տարբեր տաղաչափագետներ, իրավամբ, հանգը համարում են չափական կառուցվածքի տարր (տե՛ս В. Жирмунский, Рифма, её история и теория, П-бг, 1923, էջ 9, Б. Томашевский, О стихе, «Прибой», 1929, էջ 22): Դեռեւս հայկական դասականապաշտական գրականության մեծագույն ներկայացուցիչը՝ Արսեն Բագրատունին, մի առիթով այսպիսի դիպուկ դիտողություն է անում. «...առանց այդր [առանց հանգի] ոչ որոշին վերջք եւ սպառուածք տողից իւրաքանչիւր, եւ ոչ հանգչին ականջք լրութեամբ չափոցն» (Ա. Բագրատունի, Պոբլիոսի Վիրգիլեայ Մարոնի Մշակականք, թարգմանեալք ի չափս հայկականս եւ համառօտ մեկնաբանութեամբք բացայայտեալք ի հ. Արսենէ Կոմիտասայ Բագրատունիոյ, Վենետիկ, 1847, էջ 16): Հանգը նպաստում է ավելի ցայտուն դարձնելու չափական շարքերի ավարտն ու վերջը: Այս առումով հանգը կշռույթի այն հիմնական տարրերից մեկն է, որ անպայման ձգտում է կշռույթային միության, ձգտում է օղակել իր առկախ վիճակը, հասնել ամփոփման ու ավարտի: «<...> հանգը հոգու եւ լսողության հասարակ հիշողություն է միատեսակ հարազատ հնչյունների եւ նշանակությունների վերադարձի մասին»,- գրում էր Հեգելը եւ ապա ավելացնում. «Առանձին հանգերը կարծես թե անմիջականորեն գտնում են իրար կամ օտարանում մեկը մյուսին եւ, այնուամենայնիվ, որոնում են իրար» (Гегель, Сочинения, С. XIV, 1958, էջ 218-219): Որոնում են իրար,- ահա սա է հանգի ամենահատկանշական կողմը, քանի որ հանգն իր նմանի որոնման հարցում ավելի խստապահանջ է, քան կշռույթային մնացած գործոնները: Հարկ է հիշատակել, որ այսպես էր մտածում նաեւ Մանուկ Աբեղյանը. «Երբ ոտանավորի կանոնավորապես կրկնվող ռիթմի վրա ավելանում է հանգի դաշնակի զգացումը, ապա մենք հարատեւ սպասում եւ որոնում ենք հանգակցություն...» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ե, 1971, էջ 345):

Իր հնչյունական, ուստի երաժշտական-մեղեդային նշանակությամբ հանգն ստեղծում է միանման ձայնային ազդանշանների վերադարձի սպասողականություն եւ դրանց կապակցման, օղակման զգացողություն, հակառակ դեպքում կշռույթային ամբողջության մեջ ինչ-որ բան կմնա թերի, չավարտված, չբավարարված:

Հանգը, ինչպես նշեցինք, սերտ կապ ունի կշռույթային մնացած տարրերի եւ, առաջին հերթին, հատկապես չափի հետ: Խոսքի չափական դասավորության եւ հատույթավորման ձեւը, ըստ իր փոփոխության, փոփոխություն է մտցնում նաեւ հանգի դասավորության մեջ: Չափի կայունացումը, ճշգրիտ չափական շարքի ստեղծումը տողերին հաղորդում են նաեւ հանգային կայուն օղակումներ: Չափական տատանումները, տողերի անհամաչափությունը անկանոն ու պատահական են դարձնում նաեւ հանգի առկայությունը:

Հանգն ավելի բնորոշ է կայուն, համաչափ դասավորություն ունեցող տողերին: Հանգն այստեղ դառնում է տողերի կայուն դադարներն ազդարարող, դրանով իսկ խոսքի կշռույթը կազմակերպող վճռական գործոն: Այս դեպքում, ճշգրիտ չափի եւ հանգային օղակումների առկայությամբ, համաչափ, միանման կշռույթային տարրերով ստեղծվում են փակ ամբողջություն ներկայացնող տներ: Իսկ բաց-շղթայագերծ կառուցվածքի դեպքում, պատումի ազատ, անարգել բնույթին համապատասխան, բառերը զերծ են մնում ավելորդ հնչյունական օղակումներից ու կապակցումներից:

Շարունակությունը՝ էջ 8

[redacted]

«Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»:

Ղուկաս Դ 4

Ինչո՞ւ ենք պահք պահում. սա շատ կարեւոր հարց է, որի պատասխանից է կախված մեր պահեցողության կրոնական արժեքը:

Նախ նշենք, որ պահեցողության հիմնական նպատակն ապաշխարանքն է, այսինքն՝ մեղքից եւ հոգեկան ծուլությունից ազատվելը: Շատ նմանություններ կան պահեցողության եւ հիվանդին բժշկի կողմից նշանակված դիետայի միջեւ՝ թե՛ նպատակի եւ թե՛ մեթոդի տեսակետից: Այն, ինչը հիվանդությունն է մարմնի, մեղքը նույնն է հոգու համար՝ հոգեկան կյանքի զարգացմանը խանգարող գործոն: Ինչպես գիտենք, բժիշկները հիվանդին բուժելու նպատակով որոշակի դեղեր են նշանակում, քանզի առանց այդ դեղամիջոցների՝ հիվանդը չի բուժվում: Նույն հանգամանքը նաեւ մեղքերի դեպքում է: Այդ մեղքերից ձերբազատվելու միջոց է նաեւ պահքը, քանի որ մեղքերի պատճառը մեր սանձարձակ ցանկություններն են: Պահեցողությունն է, որ զգացական ուժերը չափավորում է:

Ուրեմն կարելի է ասել, որ պահքի նպատակն է զորացնել հոգու կյանքը՝ տկարացնելով զգացական հաճույքների քաշող ուժը:

Հայ Եկեղեցու ծիսակարգում պահոց օրերը շատ են, որոնց միջոցով Եկեղեցին թելադրում է հրաժարվել ամեն տեսակի կենդանական կերակուրներից եւ սնվել միայն բուսական կերակուրներով: Պահոց օրերին Եկեղեցին բոլորիս պատգամում է հատկապես սնվել կենդանի հացով՝ Աստծո խոսքով:

350-ական թվականներին Գանգրայում գումարված ժողովի 20-րդ կանոնն ասում է. «Չափահաս եւ մարմնով առողջ այն մարդը, ով քրիստոնյա անունն է կրում եւ քառասնօրյա պահքը մինչեւ վերջ չի պահում, նզովյալ լինի»:

Լավոդիկեի (365 թ.) ժողովի կանոնների մեջ կան Մեծ պահքին վերաբերող մի քանի կետեր՝ 49, 50, 51 եւ 52, որոնց մեջ ասվում է. «Մեծ պահքին պսակ անել կամ ծնունդ տոնել չի կարելի»:

Մեծ պահքի մասին խոսվել է նաեւ Առաքելական 34 կանոնների 8-րդ կետում, Առաքելական 85 կանոնների 69-րդ կետում, Դվինի 2-րդ ժողովի (555 թ.) կանոնների 29-րդ կետում, ինչպես նաեւ՝ Նիկիո ժողովում (325 թ.) եւ այլն:

Այսօր ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մարդու մարմինն ու որովայնն իշխում են մտքին ու բանականությանը: Ե՛վ փողի, ե՛ւ փորի թագավորությունը խլել է մարդու գլխից բանականության թագը եւ նրան իր բարձրությունից իջեցրել, հավասարեցրել անբան անասունի:

Պետք է ծոմով, պահեցողությամբ, ժուժկալությամբ ճնշել մարմինը, որպեսզի այն հլու հպատակությամբ մինչեւ վերջ ծառայի Աստծուն: Աստվածաշունչը հետեւյալ կերպ է այս ամենը ձեւակերպում, թե պահեցողությունը սգի եւ ցավի մի շրջան է, ինքնազրկանք, որն իրագործվում է որոշ ժամանակ ուտելուց եւ խմելուց, ինչպես նաեւ հաճույքից հրաժարվելով: Մենք կարող ենք ենթադրել, որ ինքն իրեն որեւէ զրկանքի ենթարկողն արդեն իսկ պահեցողության մեջ է: Սուրբ Գրքում գրված է. «Բարի են աղոթքները՝ պահեցողություններով» (Տոբիթ ԺԲ 8):

Քրիստոսը «Լեռան քարոզում» պահքի մասին հետեւյալն է ասում. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է կհատուցի քեզ» (Մատթ. Զ 16-18):

Այս խոսքերը հստակ բացատրում են, որ ծոմապահությունն անձնական արարք է եւ անհրաժեշտ չէ, որ դա կատարվի ի ցույց մարդկանց: Ծոմապահության նպատակը պարզ է՝ մարմինը վարժեցնել որոշակի մի վիճակի, որի արդյունքում կարելի է հարստացնել հոգեւոր կյանքը:

Աղջումը, աղոթքը, ապաշխարանքը, որոնք պահեցողությունից անբաժան պետք է լինեն, այն հիմնական պայմաններն են ստեղծում, որտեղ Աստծո բուժիչ եւ քավիչ զորությունն է գործում: Ս. Օգոստինոս Ափրիկեցին ասել է. «Պահեցողությունը մաքրում է հոգին, բարձրացնում միտքը, չափի եւ հակակշռի ներքեւում պահում կրքերը, ցրում է ցանկության ամպերը, մարում սեռական կրակը, արծարծում է ժուժկալությունը եւ վառում ճշմարտության լույսը»:

Հետեւաբար պահքի ու աղոթքի ճշմարիտ ու գերագույն նպատակն է քրիստոնեական հասկացողությամբ զարկ տալ մեր հոգեւոր կյանքին:

Պահքը երկու բնույթ ունի, մեկը՝ զերծ մնալ մեղքերից, իսկ մյուսը՝ պահել մարմինը՝ հրաժարվելով որոշ տեսակի կերակուրներից ու ըմպելիքներից: Երկուսն էլ բարի են, սակայն մեղքերից զերծ մնալն ավելի կարեւոր է երկու պատճառով: Նախ՝ չկա հրաման՝ միշտ մարմինը զերծ պահել կենդանական կերակուրներից, այլ դա լինում է բացառապես պահոց օրերին, սակայն կա հրաման՝ ամեն օր հեռու մնալ մեղքերից:

Երկրորդ՝ վարդապետներն ասում են, որ այն պարագայում է մարմնի պահքը գեղեցիկ, երբ հոգին իրեն զերծ է պահում մեղքերից:

Դարձյալ՝ ով իրեն զերծ է պահում մարմնավոր կերակուրներից, սակայն իր անձը ոչ՝ մահացու մեղքերից, նրա պահքը նման է սատանայի պահքին, որովհետեւ սատանան ոչինչ չի ուտում, սակայն երբեք չի դադարում մեղանչելուց:

Պահքը, ինչպես ասում է Մարկոս ճգնավորը. «Օգուտ է տալիս նրանց, ովքեր գիտակցորեն ըմբռնում են այն, եւ վնասում է՝ այն անգիտակցորեն սկսողներին»:

Ալեքսանդր Մեծը շատ ճիշտ է նկատում՝ ասելով՝ պահքն ամենից առաջ հոգու ակտիվությունն է, պայքարը ծուլության եւ մարմնի կամքի դեմ: Պահքը պայքարն է վասն կյանքի եւ վասն հոգու ազատության սովորական ստրկությունից:

Պահոց օրերը կարելի է ներկայացնել հետեւյալ բաժանումներով՝ օրապահք, շաբաթապահք, հատուկ պահքեր, Առաջավորաց պահք (սա հատուկ է միայն Հայ Առաքելական Սբ Եկեղեցու ծիսակարգին) եւ Մեծ պահք:

Չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, առաքյալների կարգադրության համաձայն, պահքի օրեր են համարվում: Ինչպես որ շաբաթապահքը հինգ զգայարանների սրբության համար է, որոնցով մեղանչում ենք, այդպես էլ երկու օրվա պահքը մեր հոգու եւ մարմնի սրբության համար է, որով գործում ենք մեղքերը:

Վարդապետներն այս պահքի համար հետեւյալ պատճառներն են նշում: Նախ՝ այն, որ Մովսեսը հրամայում է պղծությունից լվանալ մարմինն ու հանդերձները եւ բանակից դուրս լինել մինչեւ երեկո (տե՛ս Թվեր ԺԹ. 19):

Երկրորդ՝ չորեքշաբթին Եվայի խաբվելու օրն էր, երբ օձը նրան համոզեց ուտել պտղից, իսկ ուրբաթը՝ երբ Ադամը կերավ պտղից եւ ելավ դրախտից:

Երրորդ՝ չորեքշաբթի օրը պահել ի հիշատակ Քրիստոսի մատնության, իսկ ուրբաթ օրը պահել ի հիշատակ չարչարանքի:

Չորրորդ՝ որովհետեւ երկու առաքինություններ ունենք՝ տեսական եւ գործնական: Տեսականի համար սրբվում ենք չորեքշաբթի օրը, իսկ գործնականի՝ ուրբաթ, որով սրբասեր դառնալով՝ Աստծու օգնությամբ հասնում ենք ճշմարտությանը եւ բարուն:

Շարունակությունը՝ էջ 6

Ազգային զարթոնքի շեփորահարը...

Անհատներ կան, որոնք միավորում են ժամանակները, անցյալը շաղկապում ներկային, ներկան զուգորդում ապագայի հետ: Հայոց անցյալն ու ներկան շաղկապող, ինքն իրենով զոհող ու մարմնավորող գործիչներից է մեծանուն արվեստագետ, աշխարհասփյուռ հայության բոլոր խավերի ու հատվածների այնքան ջերմորեն սիրած ու փայփայած երգիչ Սահակ Սահակյանը:

Անո՛ւն, որը թանկ ու հոգեհարազատ է ամեն մի հայի համար, անո՛ւն, որը սիրո թրթիռով, նվիրումով ու երկյուղածությամբ է հնչում յուրաքանչյուր հայորդու շուրթերին:

Սահակ Սահակյանը բացառիկ երեւույթ է հայ ազգային երգարվեստի տարեգրության էջերում: Նա նաեւ մեկը եղավ այն հայ գործիչներից ու արվեստագետներից, ովքեր իրենց ողջ գործունեությամբ նախապատրաստեցին մեր ժողովրդի ազգային հավաքական նորօրյա զարթոնքը:

Դրա համար նախ պետք էր ոչ մի դեպքում մոռացության չմատնել հայոց հերոսական եւ ողբերգական անցյալը: Իսկ մեզ կամա թե ակամա պարտադրվող մոռացումի դեմ լավագույն զենքը կարող էր լինել եւ եղավ երգը՝ դարերի խորքից բխող ազգային երաժշտական արվեստը: Պատմական գենն ու հիշողությունը կանգնեցին ընդդեմ ստիպողական, պարտադրվող մոռացության, հանուն ազգային բառ ու բանի հարատեւման:

Կորուսյալ հայրենիքի ցավը, հայոց ոչ հեռավոր անցյալի խենթ ու խիզախ ընդվզումն ու մաքառումը, հանձինս հպարտ ու անպարտելի ֆիդայական հերոսամարտի, դարձան ժողովրդական երգ ու մրմունջի անբաժան, օրակարգային մասը, տնետուն, շուրթ առ շուրթ փոխանցվող հիշողություն:

Սահակ Սահակյան արվեստագետը եղավ այդ երգի անզուգական մեկնաբանն ու կատարողը, ազգային երաժշտական ավանդույթների նոր, մերօրյա պահապանն ու զարգացնողը:

Եվ հնչեց երգը, հպարտ, անզուգական հայ երգը՝ հայ գեղջուկի հոգուց սերված ու հայ ժողովրդի առօրյա կյանքի, ցավի ու հոգսի, վշտի ու մանավանդ պայքարի ու վրեժի մասին:

Երգը նաեւ մեր ժողովրդի անցած ճանապարհի ճշգրիտ ու ճշմարիտ պատմությունն է փոխանցում ապրողներին, քանզի իրական պատմությունը խորհրդային տարիներին (մինչեւ 80-ական թթ.) դրված էր յոթ փակի ու փականքի տակ:

Ավելին. վերոնշյալ բիրտ ու մռայլ ժամանակներում մեր ժողովրդի պատմական, կենդանի հիշողությունը նույնպես կուղղակեին համակենտրոնացման ճամբարները, եթե այն տարհանվելու, աքսորվելու ենթակա լիներ: Երգը մնաց ժողովրդի հոգում, չաքսորվեց սիբիրյան դաժան հեռուները:

Բայց ահա հազարավոր հայորդիների պարտադրվեց այդ դժնդակ ողբերգությունը: Նրանց թվում էր ապագա մեծանուն արվեստագետի հայրը՝ իր ժամանակի Գյումրիի հայտնի աշուղ Դվալի Մկրտիչը: Երկու անգամ նա ստիպված եղավ կրել սիբիրյան սառնաշունչ աքսորավայրերի ողջ զրկանքներն ու սարսափները: Սիբիրյան դաժան իրականության զգացողությունները նա հետագայում գեղարվեստորեն շարադրել է հուշերի անկեղծ գրքում, որը շատ ուսանելի պատգամներ է հղում ժամանակակիցներին ու հետագա սերունդներին:

Սահակ Սահակյանը ծնողներից ժառանգել է հայ մարդուն ու հայ արվեստագետին բնորոշ հոգեկան ու բարոյական լավագույն հատկությունները՝ ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, ընդդեմ չարի ու անարդարության մաքառելու կարողությունը:

Սահակ Սահակյանը լավատեսությամբ է լցված մեր գալիք օրերի հանդեպ: Համոզված շեշտադրում է, որ ոչ մի խորշակ ի վիճակի չէ մեր ժողովրդին բնահան անել իր պապենական հազարամյա բնօրրանից, քանզի անվրեպ ու անխաթար գործում է ժողովրդի գոյատեւման ու հարատեւման ամենապիտանի զենքը՝ պատմական հիշողությունը: Իսկ հայ ժողովրդի պատմությունը նախ եւ առաջ երգ ու մեղեդի է դարձել. երգով է ժողովուրդը դիմավորել իր պատմության թե՛ ուրախ, թե՛ տխուր առավոտները: Երգով ժողովուրդը մեծարում է իր պատմության իրական ու իսկական հերոսներին: Պատահական չէ, որ թուրքական ու բոլշեւիկյան բռնապետությունների օրոք անգամ հնարավոր չեղավ իսպառ ջնջել, վերացնել հայոց հիշողությունն իր պատմության ամենաողբերգական ու հերոսական դեպքերի ու դեմքերի վերաբերյալ: Եթե դպրոցական դասագրքերից քերվում ու հանվում էին հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչների անունները, ապա ժողովրդի բանավոր հիշողության էջերում՝ շուրթից շուրթ, հոգուց հոգի փոխանցվում էին անունն ու սխրանքը հայ հերոս հայդուկների ու զորավարների: Հենց այդպես եւ միա՛յն այդպես ժողովրդի հոգու խորքում կենդանի մնացին առասպելի վերածված Արաբոն, Գեւորգ Չաուշն ու Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Քեռին, Նիկոլ Դումանը, Սեբաստացի Մուրադը, Դրոն եւ նվիրյալ այլ անուններ:

Հայ արվեստագետների փաղանգում իր արժանի տեղը նվաճած Սահակ Սահակյանին երախտագիտության տուրք պիտի մատուցենք բոլորս, նաեւ հետագա սերունդները, քանզի նաեւ նրա հոգեղեն



ջանք ու նվիրումի շնորհիվ կենդանի մնաց ժողովրդի պատմական հիշողությունը՝ իր մեջ ամփոփելով ազգային երգն ու բանը:

Եվ երբ ամեն անգամ նրա կատարմամբ ունկնդրում ենք Անդրանիկին, մյուս ֆիդայիներին ու ֆիդայապետերին նվիրված երգերը, անկարող ենք թաքցնել մեր հուզմունքն ու ճիչը, ուրախությունն ու արտասուքը: Հնչում է նրա ոգեղեն ձայնը, եւ մենք մեր հոգում ընդունում ենք այն որպես հորդոր ու պատգամ, որ միշտ պատրաստ լինենք բարոյական ու ֆիզիկական ուժերի գերլարումով պաշտպան կանգնելու վտանգված հայրենիին, անկեղծ նվիրումով դառնալու ազգային ճշմարիտ արժեքների պահապանն ու խնկարկուն:

Ահա այսպես է անվանի արվեստագետը մաքուր խղճով կանգնած իր ժամանակակիցների եւ գալիք սերունդների բարոյական գնահատանքի առաջ:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ էջ 5

Հինգերորդ՝ որովհետեւ ընդունում ենք երկու օրենքներն էլ՝ ե՛ւ Հինը, ե՛ւ Նորը, դրա համար էլ երկու օր սուրբ ենք պահում:

Իսկ շաբաթապահքը սահմանել է Մեծն Ներսեսը՝ Գրիգոր Լուսավորչի թոռը: Հայրապետները ժողովրդին ձանձրույթից հեռու պահելու համար Ծննդյան եւ Այլակերպության քառասունքները բաժանեցին մասերի ու տարածեցին ամբողջ տարվա մեջ՝ որպես շաբաթապահքեր, դրանք են՝ Առաջավորաց, Եղիական, Լուսավորչի, Վարդավառի, Վերափոխման, Սուրբ Խաչի, Վարագա Սուրբ Խաչի, Հիսնակի, Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Ծննդյան եւ Մեծ պահքի վերջին շաբաթը, որը կոչվում է Ավագ շաբաթ:

Շաբաթապահքերից 4-ը եղանակների շաբաթապահքերի հետ է նույնացվում. գարնանամուտի (քառասնօրյայի երկրորդ շաբաթը), ամառնամուտի (Եղիական կամ ամռան պահք), աշնանամուտի (Վարագա խաչի պահք), ձմեռնամուտի (Ս. Հակոբի պահք):

Շաբաթապահքն ունի բազում նշանակություններ: Նախ՝ խորհրդանշում է արարչության շաբաթը, որը սրբության ու պահքի շաբաթ էր մինչեւ վեցերորդ օրը՝ Ադամի ստեղծվելը, որից հետո պահքը լուծարվեց:

Եգիպտոսից ելնելուց առաջ Աստված հրամայեց յոթ օր բաղարջ ուտել: Սա շաբաթապահքի խորհուրդն ունի, որով պահում ենք մեր հոգին ու մարմինը մեղքերի բոլոր խմորումներից: Սրանք օրինակներ են, իսկ ճշմարտությունն այն է, որ սրբում ենք մեր հինգ զգայարանները, որոնցով մեղանչում ենք: Նախ սրբվում ենք պահքով, ապա տոնում՝ սրբերին մեզ բարեխոս անելով: Այսպիսի խորհուրդ ունի շաբաթապահքը, որը պահում ենք ամբողջ տարում:

Հատուկ պահք է հիսնօրյա պահքը: Տարվա մեջ երեք հիսնյակ կա: Հիսնյակները հիսուն օրերից կազմված պահոց շրջաններ են, որոնք նախորդում են մեծ տոներին՝ Ծնունդին, Զատկին եւ Վարդավառին: Սուրբ Ծննդյանը նախորդող հիսնյակը կոչվում է «Հիսնակ»: Այն սկսվում է նոյեմբերի 18-ից, որը եւ Հիսնակի բարեկենդանն է: Ինչպես Զատկին եւ Վարդավառին նախորդող հիսնօրյա պահքերի բարեկենդաններն են կիրակի օրը տոնվում, այդպես էլ Հիսնակի բարեկենդանն է կիրակի օրը տոնվում, որը լինում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ը հանդիպող կիրակին: Այս շրջանում աշխարհականներին թելադրվում է պահել հիսնյակի առաջին շաբաթը՝ Հիսնակի շաբաթապահքը, վերջին շաբաթը՝ Ծննդյան շաբաթապահքը, եւ այդ միջակայքում գտնվող Սուրբ Հակոբի շաբաթապահքը, իսկ հոգեւորականներին՝ ամբողջ հիսնյակը:

Երկրորդ հիսնյակը Զատկին նախորդող Մեծ պահքի շրջանն է եւ կոչվում է «Աղուհացից»: Այս շրջանում ե՛ւ աշխարհականներին, ե՛ւ հոգեւորականներին թելադրվում է պահել ամբողջ հիսնյակը: Իսկ երրորդ հիսնյակը Վարդավառին նախորդող հիսուն օրերն են, որոնցից այժմ միայն երեք շաբաթն ենք պահում՝ առաջին՝ Եղիական, միջին՝ Լուսավորչի, եւ վերջին՝ Վարդավառի:

Առաջավորաց պահքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջին ազգային պահքն է:

Սա Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված պահք է: Երբ սուրբ Գրիգոր Լուսավորիչը ելավ վիրապից, 65 օր վարդապետելով՝ քարոզեց քրիստոնեությունը եւ ապա հրամայեց 5 օր սրբությամբ պահել՝ սրբելու համար 5 զգայարանները: Նաեւ սուրբ Սեղբեստրոսը, երբ մկրտեց Կոստանդիանոս կայսրին, 5 օրյա պահք սահմանեց նրա եւ ժողովրդի համար:

Առաջավորաց կոչվելու պատճառներից է նաեւ այն, որ սա է Մեծ պահքի առաջին շաբաթը: Ասում են՝ առաքյալները կամեցան 70 օր սահմանել Մեծ պահքը՝ ըստ նախահայրերի թվի, ինչպես պատմում է Ղուկաս ավետարանիչը (տե՛ս Ղուկ. Գ 23-38):

Տեր Աստված պատվիրեց Ադամին ու ասաց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտության ծառից մի՛ կերեք...» (Ծնն. Բ 2-16): Տեսեք՝ որքան կարեւոր է պահքի խորհուրդը, որը եղավ առաջին աստվածային պատվիրանը եւ դրվեց դրախտում. դա եղավ մարդու առաջին քննությունը եւ դրվեց բոլոր ժամանակներում, որը կարեւոր է եւ մեր օրերում:

Ըստ պատմական տվյալների՝ իմանում ենք, որ Շապուհ արքան Սարգիս զորավարին սպանեց Առաջավորաց պահքի առաջին օրը, այդ պատճառով էլ նրա նահատակության տոնը կատարում ենք Առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը: Ժողովուրդն այս պահքը շատ ժամանակ սխալմամբ անվանում է նրա անունով:

Երբ մարդը պատրաստվում է ճամփորդության, պետք է իմանա, թե ուր է գնում: Այդպես է նաեւ Մեծ պահքի դեպքում: Մեծ պահքն ամենից առավել հոգեւոր ճամփորդություն է, որի նպատակակետը Զատիկն է՝ տոների տոնը:

Մինչեւ Մեծ պահքին մոտենալը՝ Հայ Առաքելական Եկեղեցին իր ծիսակատարություններով այդ մասին հայտնում է մեզ: Մեծ պահքի առաջին հիշատակումը տեսնում ենք Ավետարանում (Ղուկ. ԺԹ 1-10):

Մեծ պահքը սահմանված է առաքյալների կողմից՝ «քառասուն օր պահեն չարչարանաց օրերից առաջ եւ ապա կատարեն Զատիկը» (Կան. Առաք.):

Մեծ պահքի առաջնային կարեւորությունն այն է, որ հավատացյալ ժողովրդին Ավագ շաբաթվա ընթացքում առավելագույնս նախապատրաստի սբ Հաղորդությանը եւ սբ Զատիկը տոնի առավել պատրաստված ու ներամփոփ խորհրդի մեջ:

Պահեցողությունը նաեւ սիրո գործ է կատարում, երբ մեկը կամավոր հոժարությամբ ճնշում է մարմինը, իր մեջ ցույց է տալիս Աստծո հանդեպ կատարյալ սերը: Իսկ սա լինում է նախ պահքով, ապա՝ մարմնի այլ ծառայություններով:

Հիսուսն Իր առաքելության առաջին օրերին հարկ համարեց ունենալ պահեցողության ու աղոթքի մի շրջան: Եթե Քրիստոսն այդ անհրաժեշտությունը զգաց, ապա ինչքան եւս մենք պետք է հետեւենք Նրա օրինակին: Քրիստոնեական եկեղեցու մեջ հաստատված ամեն մի կարգ, ավանդություն իր ձեւն ու իմաստը վերցրել է Քրիստոսի կյանքի օրինակից:

Մեծ պահքը բացառիկ առիթ է ընձեռում մեզ՝ մեր մեջ գտնելու եւ տեսնելու Քրիստոսին՝ որպես խորհուրդ խորին:

Պետք է նաեւ իմանալ, որ կանոնն ազատում է պահքից այն մարդկանց, ովքեր գտնվում են ճանապարհին եւ ստիպված են սնվել այն ուտելիքով, որը նրանք կարող են գտնել ճանապարհին: Այդ մարդկանց թվին կարելի է դասել նաեւ նրանց, ովքեր գտնվում են հիվանդանոցներում, բանտերում, կամ էլ նրանց, ովքեր ստիպված են ճաշել աշխատանքի վայրում՝ չկարողանալով իրենց հետ այնտեղ տանել պահքի կերակուր: Մնացած բոլորին պարտադիր է հետեւել պահքին՝ կանոնի համապատասխանությամբ եւ հոգեւորականի օրհնությամբ:

Մի խոսքով՝ Մեծ պահքը մեզ պարգեւում է այն առիթը, որ մենք մեզ առաջնորդենք դեպի հոգեւոր կյանք եւ մեզ հետ միասին բոլոր նրանց, ովքեր շրջապատում են մեզ:

Լուսինե ՉԱՔԱՐՅԱՆ

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետարանում մշտապես խոսվում է մի պտղի մասին, որը պետք է հունդ տա, երբ ընկնի բարեբեր հողին, եւ տաղանդի մասին, որը տրվեց մարդուն՝ ավելիով վերադարձնելու համար: Այս առակներում Քրիստոսը քողարկված կերպով խոսում է մարդու ստեղծարարության մասին, նրա ստեղծարար կոչման մասին: Շնորհները հողում թաղելը, այսինքն՝ ստեղծարարության բացակայությունը, դատապարտվում է Քրիստոսի կողմից: Պողոս առաքյալի՝ մարդու բոլոր շնորհների մասին ողջ ուսմունքը ուսմունք է մարդու ստեղծարար կոչման մասին: Շնորհներն Աստծո կողմից են տրված, եւ դրանք ցույց են տալիս ստեղծարար կոչումը: Այդ շնորհները տարբեր են. ամեն մեկը՝ ըստ իրեն տրված հատուկ շնորհի, կոչված է ստեղծարար ծառայության: Այդ պատճառով էլ չի կարելի ասել (ինչպես հաճախ ասում են), թե Սուրբ գրվածքներում, Ավետարանում ոչինչ չի խոսվում ստեղծագործության մասին: Խոսվում է, բայց պետք է կարողանալ կարդալ, պետք է կռահել, թե ինչ է Աստված մարդուց ուզում ու սպասում: Ստեղծագործությունը մշտական աճ է, ավելացում, աշխարհում չեղած նորի ստեղծում: Եվ ստեղծագործության խնդիրն էլ խնդիր է այն մասին, որ նորը, չեղածը *(տե՛ս հեղինակի «Ստեղծագործության իմաստը» եւ «Ազատ ոգու փիլիսոփայությունը» գրքերը)* հնարավոր են: Ստեղծագործությունն իր բուն էությամբ ստեղծարարություն է ոչնչից: Ոչինչը դարձավ ինչ-որ բան, անգոյը դարձավ գոյություն: Ստեղծագործությունը ենթադրում է անգոյություն՝ նման նրան, ինչպես Հեգելը լինելությունն է համարում չգոյություն: Ստեղծագործությունը պլատոնական Էրոսի պես աղքատության ու հարստության, ուժերի վատնումի եւ ավելցուկի երեխան է: Ստեղծագործությունը կապված է մեղքի հետ, եւ միաժամանակ այն զոհաբերում է: Ճշմարիտ ստեղծագործության մեջ մշտապես առկա են կատարսիսը, մաքրագործումը, հոգու ազատագրումը հոգեւոր-մարմնական տարերքից կամ հոգեւոր-մարմնական տարերքի հաղթահարումը հոգուց: Ստեղծագործությունը սկզբունքորեն տարբերվում է էմանացիայից ու ծնունդից: Էմանացիայում տեղի են ունենում նյութի ճառագում եւ նյութի բաժանում: Ստեղծարարությունը նույնպես, ինչպես էվոլյուցիայում, նյութի եւ էներգիայի տեղաբաշխում չէ: Էվոլյուցիան ոչ միայն ստեղծարարություն չէ, այլեւ հակադրված է ստեղծարարությանը: Էվոլյուցիայում ոչ մի նոր բան չի ստեղծվում, այլ միայն հինը վերափոխվում է: Էվոլյուցիան անհրաժեշտություն է, ստեղծարարությունը՝ ազատություն: Ստեղծարարությունը կյանքի մեծագույն գաղտնիքն է, նորի հայտնության գաղտնիքը՝ չեղածի, ոչնչից դուրս չեկած, ոչնչից չծագած, ոչնչից չծնված: Ստեղծարարությունը ենթադրում է ոչինչ, **m**ղծս (այլ ոչ թե **o**սչծս) (հուն. ծս- գոյ, կեցություն, **m**ղծս- ոչինչ, չգոյություն, **o**սչծս- ունի ոչ թե կեցությունն ընդհանրապես, այլ կոնկրետ գոյությունը ժխտելու իմաստ): Եվ այդ մոնը սկզբնական, առաջնային, մինչաշխարհային, մինչլինելության ազատության գաղտնիքն է մարդու մեջ: Ստեղծարարության գաղտնիքը գաղտնիքն է ազատության: Ստեղծարարությունը միայն հնարավոր է անսահման ազատությունից, քանզի միայն անսահման ազատությունից է հնարավոր նորի, նորագույնի ստեղծումը: Ինչ-որ բանից, եղածից հնարավոր չէ ստեղծել նորը, չեղածը. հնարավոր է միայն ավարտումը, ծնունդը, վերաբաշխումը: Ստեղծարարությունը ճեղքումն է չեղածից, անգոյից, կյանքում եւ աշխարհում առկա ազատությունից: Ստեղծարարության գաղտնիքը բացահայտվում է Աստծո կողմից աշխարհի արարման մասին աստվածաշնչյան-քրիստոնեական առասպելում: Աստված աշխարհն ստեղծեց ոչնչից, այսինքն՝ ազատորեն ազատությունից: Աշխարհն Աստծո էմանացիան, ծնունդը կամ էվոլյուցիան չէ, այլ արարչությունը, այսինքն՝ բացարձակ նորը, չեղածը: Ստեղծարարությունն աշխարհում հենց միայն նրա համար է հնարավոր, որ աշխարհն արարված է, որ կա Արարիչ: Եվ Արարչի՝ Իր նմանությամբ ու պատկերով ստեղծած մարդը նույնպես արարիչ է եւ կոչված է ստեղծագործելու: Սակայն ստեղծարարությունը բարդ բաղադրություն ունի: Այն ենթադրում է ոչ միայն ազատություն, սկզբնական, հոմերոսյան (հեքիաթային), մարդու անստեղծ ազատություն, այլեւ ենթադրում է Աստված-Արարչից մարդ-արարչին տրված շնորհները, ենթադրում է աշխարհի՝ որպես ստեղծարարության ասպարեզ: Մարդու ստեղծարարությունը ենթադրում է երեք տարր՝ ազատության տարր, որի շնորհիվ է միայն հնարավոր նորի եւ չեղածի ստեղծարարությունն, շնորհի տարրը եւ դրա հետ կապված՝ կոչումի, եւ արդեն արարված աշխարհի տարրը, որում կատարվում է ստեղծարարության գործողությունը եւ որից էլ իր համար վերցնում է նյութերը: Մարդն ինքը մեղավոր չէ իր շնորհի եւ հանճարի համար: Նա դրանք ստացել է Աստծուց, դրա համար էլ իրեն զգում է Աստծո ձեռքում, Աստծո գործերի գործիքն աշխարհում: Չկա ավելի ծիծաղելի եւ խղճուկ բան, քան երբ հպարտանում են իրենց հանճարով: Թերեւս միայն կարելի է հպարտանալ իր սրբությամբ, բայց ոչ իր հանճարով: Այդ պատճառով էլ հանճարը զգում է, որ ասես ինքը չի գործում, որ ինքը համակված է Աստծով, որ ինքն Աստուծո հղացումների եւ ենթադրությունների գործիքն է:

Շարունակությունը՝ էջ 8

Տավուշի մարզի Աչաջուր գյուղ

Տավուշի մարզի Աչաջուր գյուղը տեղավորված է Իջեւանի քաղաքից 15 կմ հյուսիս-արեւելք՝ Աչաջուր գետակի ափին: Ներկայիս Աչաջուր գյուղը հիմնվել է անցյալ դարում եւ, ցավոք, զուրկ է պատմական հուշարձաններից: Հին Աչաջուր գյուղատեղին գտնվում է այստեղից մոտ 3 կմ արեւմուտք: Գյուղի տարածքում եւ շրջակայքում պահպանվել են միջնադարյան մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, որոնցից ամենախոշորը Մակարավանքի եկեղեցական համալիրն է: Այն ոչ միայն Տավուշի մարզի, այլեւ միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքային համակառուցվածք է: Գտնվում է Աչաջուր գյուղից 3 կմ հարավ-արեւմուտք՝ Պայտաթափ կոչվող սարահարթի վրա: Դիրքը բարձրահայաց է եւ իշխող:

Մակարավանքի հուշարձանախմբի մեջ են մտնում հին եկեղեցին, գլխավոր եկեղեցին, գավիթը, մատուռը, տապանատունը, նշխարատունը, դարպասի պարիսպները, օժանդակ շինությունները:

Հին եկեղեցին Մակարավանքի հնագույն շինությունն է եւ գտնվում է հուշարձանախմբի հյուսիսարեւելյան մասում: Մինչեւ վերջին ժամանակներս եկեղեցին վերագրվում էր 10-րդ դարին: Սակայն կատարված ուսումնասիրությունների արդյունքում արդեն եկեղեցին համարվում է 7-րդ դարի շինություն: Ներքուստ խաչաձեւ, արտաքուստ քառանկյուն հատակագծով շինություն է՝ կառուցված կարմրավուն խոշոր քարերով՝ շարված կրաշաղախով: Եկեղեցու մուտքն արեւմտյան պատից է՝ գավթին կից: Ունի 11 մ երկարություն եւ 8.1 մ լայնություն: Եկեղեցին բազմիցս վերանորոգվել է: Այս մասին իմանում ենք եկեղեցու պատերին փորագրված մի քանի արձանագրություններից: Դրանք հիմնականում վկայում են նվիրատվությունների մասին եւ հավանաբար գրվել են Հովհաննես Ա վանահոր ժամանակ, երբ եկեղեցում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Դրանցից մեկում, որպես նվիրատու, հիշատակվում է Արալանսա անունը: Մյուս արձանագրության մեջ, որպես նվիրատու, հանդես է գալիս Ականջ իշխանը: Նա վանքին է հատկացրել իրեն պատկանող երկու ջրավազանների ջուրը՝ երկու գիշերվա ընթացքում վանքապատկան հողերը ջրելու համար: Արձանագրությունների մի մասն այժմ ամբողջովին վնասված է եւ հնարավոր չէ վերծանել:

Գլխավոր կամ Սբ Աստվածածին եկեղեցին գտնվում է հուշարձանախմբի հարավային կողմում: Բավականին ընդարձակ կառույց է՝ 13.5 մ երկարությամբ եւ 9 մ լայնությամբ՝ կառուցված տարբեր երանգների սրբատաշ քարերով: Եկեղեցին պատկանում է «գմբեթավոր սրահ» տիպի ճարտարապետական կառուցվածքին: Ներքուստ խաչաձեւ, չորս անկյուններում երկհարկանի ավանդատներով շինություն է, ընդ որում՝ մուտքի մոտ կառուցված երկու ավանդատները եզակի նմուշի են եւ համաձայն պատմական աղբյուրների՝ ծառայել են որպես հանդիսասրահ՝ ազնվական կանանց համար, որոնք այստեղից հետեւել են Պատարագին: Գլխավոր խորանի կիսակլոր պատի մեջ քանդակված է տասներեք գոգավոր խորշ՝ իրարից բաժանված կամարակապ որմնասյուներով: Բեմի ճակատի ողջ մակերեսը ծածկված է բարձրարվեստ քանդակներով, որոնք իրավամբ համարվում են հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից: Բեմի 4 մ երկարություն եւ 1.5 մ լայնություն ունեցող հարթությունն ամբողջովին քանդակված է ութանկյուն աստղիկներով, որոնց մեջ պատկերված են կենդանակերպ եւ բուսական հյուսածո քանդակներ: Քանդակների մեծ մասն առասպելական կենդանիներ են՝ տեղտեղ մարդու կերպարանքով: Քանդակներից մեկի վրա փորագրված է եռատող արձանագրություն, ինչը պատկանում է միջնադարյան Հայաստանի մեծանուն քանդակագործ Երիտասարդին: Գլխավոր եկեղեցու մասին պատմող միակ արձանագրությունը փորագրված է եկեղեցու հարեւանությամբ գտնվող տապանատան տանիքին տեղադրված խաչքարի վրա: Ըստ այդմ՝ գլխավոր եկեղեցին կառուցվել է 1205-ին՝ Հովհաննես Ա-ի վանահայրության տարիներին: Եկեղեցին կառուցել է Բազազ իշխանի որդի Վարդանը, խաչքարը կանգնեցվել է եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո՝ ի հիշատակ կառուցողի եւ աջակցողների:

Մակարավանք անունով եկեղեցին առաջին եւ միակ անգամ հիշատակվում է գլխավոր եկեղեցու արեւելյան արտաքին պատին գրված արձանագրության մեջ: Այդ անվան շուրջ բազմաթիվ առասպելներ են հյուսվել: Ըստ ժողովրդի մեջ տարածված ավանդության՝ գլխավոր եկեղեցին կառուցվել է Մակար անունով վարպետի կողմից, որին օգնել է նաեւ տղան: Վերջինս քարերն է պատրաստելիս եղել: Հանկարծ Մակարը նկատել է, որ նոր քարերն իր տղայի պատրաստածները չեն եւ ներկաներին հարցրել է, թե ինչի են ուրիշ քարեր տալիս իրեն: Նրան ասել են, որ տղան մահացել է: Լսելով այդ մասին՝ Մակարն իրեն ցած է գցել եկեղեցու գմբեթից: Եկեցին նրա անունից էլ, իբր, կոչվել է Մակարավանք:

Նշենք, որ սա ընդամենն ավանդություն է: Իսկ հավանականն այն է, որ եկեղեցին օծվել է Ընդհանրական եկեղեցու սուրբ Մակար Եգիպտացու (Մակար Մեծ) (301-391) անունով:

Անդրադառնալով մեկ այլ ավանդազրույցի՝ ավելացնենք, որ եկեղեցու կառուցան համար պատրաստվող շաղախի ջուրը կժով Գերան անունով մի աղջիկ է կրել: Այնքան ջուր է կրել, որ ուսին վերք է առաջացել եւ մահացել է: Աղբյուրը, որտեղից Գերանը ջուր է կրել, կոչվում է Գերանի աղբյուր, իսկ տարածքը՝ Գերանի բացատ: Աղբյուրի ջուրը հետագայում բերում են վանք:

Սբ Աստվածածին եկեղեցուն հյուսիսից կից է ընդարձակ գավիթը՝ կառուցված չորս սյուների վրա: Ունի քառակուսի հատակագիծ՝ 13 մ երկարություն եւ նույնքան՝ լայնություն: Կառույցի կենտրոնական մասում առանձնանում է ութանկյուն գմբեթը, որի վրա կառուցված է եղել սյունազարդ գմբեթ: Գավիթն աչքի է ընկնում գեղեցիկ քանդակներով, նախշազարդ խաչերով: Չնայած ժամանակի ընթացքում գավիթը ենթարկվել է վերանորոգումների, սակայն այսօր այն, մեղմ ասած, կործանման եզրին է: Վնասված է հատկապես տանիքը, փլուզման եզրին են գավթի հաստափոր սյուները:

Շինությունը թե՛ արտաքուստ, թե՛ ներքուստ հարուստ է բազմաթիվ արձանագրություններով: Դրանցից ամենակարեւորը եկեղեցու հյուսիսային պատին առկա արձանագրությունն է: Այն պատմում է նվիրատու Վաչե Անբերդեցու մասին: Վերջինս պատմական հայտնի անձնավորություն է՝ Վաչուտյան տոհմի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Վաչե 2-րդը, Սարգիս Քուրդ 1-ինի որդին, որն այս գավառներում իշխել է 13-րդ դարի 1-ին տասնամյակներին: Նա կառուցել է Սաղմոսավանքի Սբ Սիոն եկեղեցին (1215 թ.) եւ օժանդակել Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու շինարարությանը (1217 թ.):

Շարունակությունը՝ էջ 8

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 7

Սոկրատեսի դեւը ինքը չէ, այլ իր մեջ բնակվող արարածը: Ստեղծագործողը մշտապես զգում է իրեն դեւով, իր մեջ բնակված հանճարով համակված: Հանճարեղության ձգտող կամքը լոկ ազատության միջոցով վերեւից տրված շնորհի բացահայտումն է: Մարդը չի կարող հենց իրենից վերցնել նյութը ստեղծագործելու համար, իր սեփական ընդերքից, ոչնչից: Ստեղծագործական ակտի բնույթն ամուսնական է. այն միշտ հանդիպում է: Ստեղծագործության նյութերը պեղվում են Աստծո արարած աշխարհից: Դա տեսանելի է արվեստի բոլոր տեսակներում: Դա տեսանելի է բոլոր հայտնագործումներում եւ գյուտերում: Դա տեսանելի է ճանաչումի ստեղծագործության մեջ, փիլիսոփայությունում, որը ենթադրում է կեցություն եւ Աստծո արարած աշխարհը, առարկայական իրականությունը, առանց որի մտածողությունը կատարվում է դատարկության մեջ: Աստծուց են մարդուն տրված ստեղծագործական շնորհը, տաղանդը, հանճարը, եւ տրված է աշխարհը, որով եւ որի միջոցով պետք է տեղի ունենա ստեղծագործության գործույթը: Տիրոջից է բխում կոչը, որ մարդը կատարի ստեղծագործական ակտը, իրականացնի իր կոչումը, եւ Աստված սպասում է իր կոչի պատասխանին: Մարդու՝ Աստծո կոչի պատասխանը չի կարող ամբողջովին բաղկացած լինել Աստծուց շնորհված տարրերից եւ Աստծուց բխած լինելուց: Ինչ-որ բան պետք է բխի նաեւ մարդուց, եւ դա հենց այն է, ինչը ստեղծարարություն է ըստ առավելության, նորի եւ չեղածի ստեղծարարությունը: Այդ ինչ-որ բանը ինչ-որ բան չէ, այլ ոչինչը, ազատությունը, առանց որի չկա ստեղծագործական գործույթ: Ազատությունը, ոչնչով չդետերմինացված, պատասխան է տալիս Աստծո կանչին դեպի ստեղծարարական գործերին, սակայն նա այդ պատասխանը տալիս է միավորված այն շնորհի, հանճարի հետ, որն ստացել է Աստծուց արարչագործության ընթացքում եւ այն նյութերի հետ, որոնք գտնվում են արարված աշխարհում: Մարդու ստեղծագործությունը ոչնչից պետք է հասկանալ մարդու ստեղծարարությունը ազատությունից: Ուզածդ ստեղծագործական ծրագրում կա մարդու նախնական ազատության մասնիկ՝ ոչնչով չդետերմինացված, անհատակ, ոչ Աստծոց եկած ազատությունից, այլ դեպի Աստված գնացող: Աստծո կանչն ուղղված է հենց այդ անհունին, եւ անհունից էլ սպասում է պատասխանի: Ազատության այդ անհունը առկա է ուզածդ ստեղծագործության մեջ, սակայն ստեղծագործական արարումն այնպես բարդ է, որ դժվար է նրանում բացահայտել այդ սկզբնական տարրը: Ստեղծագործական գործույթը նաեւ շնորհի եւ ազատության փոխներգործությունն է՝ Աստծուց մարդուն եւ մարդուց՝ Աստծուն եկող: Եվ ստեղծագործական գործույթն էլ առավելապես կարելի է վերագրել մե՛կ ազատության եզրույթներին, մե՛կ էլ՝ շնորհի եզրույթներին, շնորհի համակվածությանն ու ոգեշնչմանը: Սակայն ոգեշնչումը հնարավոր չէ առանց ազատության: Պլատոնիզմն անբարենպաստ փիլիսոփայություն է՝ մեկնելու համար ստեղծագործությունը՝ որպես նորի ու չեղածի հորինվածք:

Շարունակելի

Թարգմանությունը ռուսերենից Ա. Ս.-ի

Մեկնաբանություն

Սկիզբը՝ էջ 7

Ամենայն հավանականությամբ՝ հենց այս ժամանակահատվածում էլ կատարվել է նրա նվիրատվությունը: Եվ եթե գավթի ամենահին արձանագրությունը թվագրված է 1224 թ., ուրեմն այդ թվականին շենքի կառուցումն արդեն ավարտված է եղել:

Մուտքը երկու կողմից է՝ հյուսիսային եւ արեւելյան: Արեւելյան մուտքերից մեկը տանում է դեպի հին եկեղեցի, մյուսը՝ դեպի նշխարատուն, որն այժմ ամբողջովին ավերված է:

Ենթադրվում է, որ գավթին եւ հին եկեղեցուն կից կառուցված, այժմ ավերված այս տարածքը ծառայել է որպես նշխարատուն: Նշեմ, որ այս կառույցը քիչ է ուսումնասիրված, եւ կառուցման ժամանակը վիճելի է: Վերլուծելով եղած փաստերը՝ կարելի է ենթադրել, որ շենքն իր կառուցման տեխնիկայով ժամանակակից է հին եկեղեցուն:

Ականատեսների վկայությամբ՝ այս տարածքում ժամանակին բազմաթիվ խաչքարեր են դասավորված եղել՝ թաքցնելու համար թշնամիներից: Այժմ դրանց փոխարեն քարաբեկորներ են թափված: Ասում են, իբր, խաչքարերը գողացվել եւ վաճառվել են հարեւան վրացիներին:

Մակարավանքի մյուս եկեղեցին, որը նույնպես կրում է Ս. Աստվածածին անունը, գտնվում է գլխավոր եկեղեցուց արեւելք: Կառուցվել է վանքի առաջին առաջնորդ Հովհաննես 1-ինի կողմից՝ 1198-ին: Շինությունն իր արտաքին տեսքով համարվում է Մակարավանքի ամենագեղեցիկ կառույցը: Ներքուստ խաչաձեւ հատակագիծը շրջապատված է 4.25 մ տրամագիծ ունեցող շրջանաձեւ պատվանդանով, որից հետո եկեղեցու ծավալը դառնում է ութանիստ եւ պսակվում գլանաձեւ թմբուկի վրա նստող վեղարաձեւ գմբեթով:

Եկեղեցին հարուստ է բազմաթիվ քանդակներով: Դրանցից ամենաուշագրավը եկեղեցու հարավային պատին պատկերված երկու կռվող առյուծներն են, որոնք համարվում են Բագրատունիների արքայական խորհրդանիշը:

Եկեղեցուն հյուսիսից կից է փոքրիկ մատուռը, որն ունի 3 մ երկարություն եւ 2 մ լայնություն: Կառույցն իր ներքին տեսքով տապանատուն է հիշեցնում, հետեւաբար ենթադրություններ կան, որ այն ծառայել է հենց այս նպատակով: Շինության պատերին արձանագրություններ չկան, ուստի կառուցման ստույգ թվականն անհայտ է: Դատելով քարերից եւ դրանց մշակման ոճից՝ կառույցը կարելի է ժամանակակից համարել հուշարձանախմբի մյուս կառույցներին:

Մակարավանքի եկեղեցական համալիրն աչքի է ընկնում իր յուրահատուկ եւ խորհրդավոր քանդակներով, գեղեցիկ, նախշազարդ պատկերներով: Դրանց մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես գլխավոր եկեղեցու գմբեթին փորագրված գծագիրը: Այն ավելի շուտ երկրաչափական պատկեր է հիշեցնում եւ հուշում եկեղեցում առկա ինչ-որ գաղտնուղու մասին, որն առայժմ անհայտ է:

Եկեղեցին ունի նաեւ արեւային ժամացույց, որը գտնվում է գլխավոր եկեղեցու հարավային պատին: Նրա օգնությամբ ժամանակին տեղի հոգեւորականները կողմնորոշվել են եւ պատարագի կարգ կատարել ճիշտ ժամանակին:

Հուշարձանախմբի շրջակայքում՝ պարսպապատերից ներս եւ դուրս, պահպանվել են նաեւ այլ շենքերի ավերակներ: Դրանցից առավել ամբողջական են մնացել վանքի հարավարեւմտյան մասում գտնվող երկու մեծ սենյակների բարձր պատերը՝ 2-3 մ երկարությամբ: Ենթադրվում է, որ դրանք եղել են վանական միաբանության կացարանները:

Տնտեսական շենքերի ավերակներ եւ բազմաթիվ գերեզմաններ կարելի է հանդիպել Մակարավանքի նաեւ հարավային տարածքում:

Այս բոլորը միասին շրջապատված են այժմ կիսավեր պարսպով եւ դեպի վանք մուտք գործող դարպասով: Դարպասի 3.5 մ լայնության բացվածքը փորված է ժայռաբեկորի մեջ: Պահպանվել է դարպասի կամարաձեւ թաղը՝ շարված շերտավոր կրաքարի սալիկներով:

Պարսպի սահմաններից դուրս՝ վանքին հարող ընդարձակ տարածքում, պահպանվել են միջնադարյան աղբյուրների մնացորդներ, նշմարվում է Մակարավանքի ավերակ գյուղատեղին, կան գերեզմանատներ եւ այլն:

Ի տարբերություն մարզի շատ եկեղեցիների՝ Մակարավանքն այսօր գործող եկեղեցի է: Քահանան ամեն շաբաթ եւ կիրակի օրերին այստեղ Պատարագի կարգ է կատարում, իսկ յուրաքանչյուր հավատացյալ հնարավորություն ունի ամեն օր եկեղեցի այցելելու՝ իր աղոթքը հնչեցնելով առ Աստված: Այստեղ, ինչպես գործող բոլոր եկեղեցիներում, կատարվում են պսակադրություն, մկրտություն, նշվում եկեղեցական բոլոր տոները:

Անուշ ԱՂԱՍՍԱՐՅԱՆ

ՀԱՆԳԸ

Սկիզբը՝ էջ 5

Բանաստեղծական կառուցվածքի փոփոխությամբ էլ պայմանավորվում է հանգի անհրաժեշտ եւ ոչ անհրաժեշտ լինելու հանգամանքը: Հանգը բանաստեղծության կառուցվածքին հաղորդում է որոշակի տեսք, բառերի որոշակի տեղայնացում ու հաջորդականություն: Խոսակցական-վերլուծական բաց-շղթայազերծ բանաստեղծության դեպքում հանգը կշռույթը կազմակերպող գործոնից երբեմն վերածում է պարտադրանքի: Չափական կայուն տատանումներից, երգեցիկ-մեղեդային կրկնաբերման օրորից ազատվելու ձգտումն իր հետ բերում է նաեւ հանգի վերացման միտումներ: Բաց-շղթայազերծ հորինվածքի դեպքում հանգն արդեն խոսքը չի կառուցում, նրա դերը գերազանց է կանոնավոր, փակ կառուցվածք ունեցող բանաստեղծության մեջ: Այս դեպքում արդեն լրիվ անիմաստ է դառնում հարցի այսպիսի դրվածքը՝ անհրաժեշտությո՞ւն է հանգը, թե՞ ոչ: Հանգի անհրաժեշտությունը պայմանավորված է բանաստեղծության որոշակի տեսակով: Երգեցիկ-մեղեդային կանոնավոր կառուցվածքն առանց հանգի չի կարող «յոլա գնալ»: Բայց քանի որ աստիճանաբար նեղանում է բանաստեղծական այդ տեսակի կիրառման ոլորտը, եւ դրա հետ մեկտեղ ու հաճախ էլ դրա փոխարեն իր տեղն է հաստատում բաց-շղթայազերծ կառուցվածքը, որ թեեւ տեղ-տեղ ունենում է անկանոն, պատահական, անգամ ցանկալի հանգակապեր, բայց էությամբ հակված է անհանգ, ազատ ընթացքի, բնականաբար նվազում է նաեւ հանգի դերը: Ազատ խոսքը չի հանդուրժում խիստ ընդգծված ձեւական-կառուցվածքային պայմանականություններ:

Երգեցիկ կառուցվածքի պոեզիան իր կշռույթային կայուն օրենքներով, որոնց մեջ մտնում են նաեւ հանգն ու չափը, հատածն ու դադարը, տունն ու կրկնաբերումը, մշակվել է դարերի ընթացքում, նորագույն շրջանում նկատելի են այդ տեսակի հաղթահարման միտումներ: Այնպես որ, հանգի վերացումն առանձին բան չէ, այն կապված է չափի եւ կանոնավոր փակ կառուցվածք ունեցող բանաստեղծության կշռույթային համակազմի մնացած տարրերի հետ: Խոսքի աստիճանական ազատագրումը համանման հնչեղության եւ տողաչափերի դասավորության պարտադրանքից, ստեղծում է չափածո խոսքի մի տեսակ, որ ընդհանուր առմամբ անհանգ լինելով հանդերձ՝ ունի նաեւ հնչյունաբանական, այդ թվում եւ հանգային հեռավոր ու համեմատաբար ազատ կապակցումներ:

Մինչ հանգի դրսեւորման ու փոփոխությունների ձեւերը ներկայացնելը՝ ըստ բանաստեղծական խոսքի հիմնական կառուցվածքային տեսակների, համառոտ անդրադարձով մտաբերենք հանգի պատմությունը, մուտքը հայ պոեզիա, զարգացման փուլերը եւ հանգին տրված բնութագրությունները:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լուսավորական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստորագր. տպագր. 7.10.2015 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ